

ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴ ԳՈՔԼԵՆ

(ՏԵՂ Հասոր ԽԳ. Էջ 274)

Զ

Այլ որչափ և գովուի դօքլէն այս
կամ այն մասերու մէջ, այսու հան-
գերձ իւր դերազանցութիւնը կը կա-
յանայ Մօղիէռի կատակերգութեանց
մէջ, երբ Սգարենի և Մասգառիյի
հանդերձիք՝ մեծաձայն ծաղրաբա-
նելով և մեծաձայն ծիծաղելով՝ ան-
մահ կատակերգութիւնը ընդարձակ և ճոխ
զուարճախօսութեան մէջ կը շողայ:
Այն ծիծաղաբարժութիւնն՝ որ կարձ
քիթ և թանձր շրթունք կը պահան-
ջէ, ըստ Ալինսոս Տօտէի ըսածին,
իւր երեսին, ձայնին և բնաւորութեան
համար կարծես թէ շինուած է: Մօ-
լիէռի երկասիրութեանց մէջ արեգակ-
նօրէն կը ճառագյշէ և իշխանարար
կը տիրէ և թատեր կամարը կը զդըր-
դեցընէ: Մայրաշարժ նազունիք կա-
տակերգութեան մէջ Մասգառիլ ձե-
ւացընողաց ոչ ոք դօքլէնի հաւասար
յանդուզն համարձակութեամբ ըսած
է իւր անհեծեթ անմտութիւնքը: ոչ
ոք թատեր վրայ կարողացած է նեն-
դաւորագյն դէմք առնուլ և լրբացյնս
ձեացընել խորամանկ և ծիծաղլուտ
ծառայի մը աներեսութիւնն, որ և
աչք առած է՝ բռնցի և գաւազանի
հարուածներ, և պատրաստ է ամէն
հեղկատակութեանց և ո՛ և է անզգա:

մութիւն կատարելու: Սգարեն ձեացը-
նողացմէ ոչ ոք կարողացած է այնքան
յաջողագյնո՞ կեղծաւոր, խաբերայ և
ծաղրածու երսիլ Այս գիւցազներգակ
զաւեշտից մէջ գօրէն կը նուաճէ ըլլ-
թատորն արբսյական անխոռովութեամ-
բըն, զոր իւր հանճարոյն ժանօթու-
թիւնը կ'ազդէ իւր վրայ, Դիմօք այն-
քան գիւրաշրջիկ է, ձայնն այնչափ ա-
ռածիգ, անդամքն այն օրինակ ճկուն,
և այնպիսի վատահութիւն և համար-
ձակութիւն մը կը ցուցընէ, որ բառով
անբացատրելի են: Մայրաշարժ նա-
զունիք կատակերգութեան մէջ ամէն
մէկ բառին ուժգին և բարձրագոյ ծի-
ծաղ կը յարուցանէ հանդիսականաց
մէջ, երբ գրասէր և ընթերցասէր աղ-
նուականը կը ձևացընէ, և այն անճոռ-
նի մանրերգը կ'արտասանէ, որ Գոդը,
գոդը բանեցէք գոյմամբ կը վերջանայ:
Նենգուրիշնք Սգարենի խաղին մէջ,
առ ՚ի համոզել զիրկանտ վեցհարիւր
սկուտը տալու, յետին աստիճանի ծի-
ծաղաբեր արագութեամբ ետեէ ետե
կը կցէ այն երկայն խօսակցութիւնքը:
Այս զրուցատրութեանս մէջ այլ ևս
պարբերութիւն չի մնար, հապա բառից
յորդաւատ բլիսումն և գահավիժաբար
անկումն, որ գրամոյ շրջեալ պարկից
թափելու և հնչելու ձայնը կը հանեն,
ունկնդրաց բերնէն զարմանաց աղա-
ղակներ խլելով:

Տաղտկացուցիչը խաղին մէջ՝ որ սամղ անձնն գերին մէջ, մի շունչով կ'արտասանէ, իրրև յանպատաստից, որսի նկարագրին հարիւր և շորս միաշար տողերը. շարժուածքն և ճայնն՝ այն աստիճանի ճիշդ նմանցընելով ըրած նկարագրութեանը, որ խօսած ատենը կարծես թէ եղնկանց անտափն մէջէն փախչիլը կը տեսնես, և թատրը ձիոց ոտից գոփմամբը, և շանց հայելով, եղներափողոց հնչմամբը և որսորդաց գոյմամբն կը թնդայ, իրրև թէ ձիախաղից ամրողը ընկերութիւն մը տեսարանին վրայ խաղար:

Ի վերայ այսր ամենայնի՝ յոգնիլ չի գիտեր: Անխորհնորդն խաղին մէջ Մասգառիլի գերը ձեացընելին յետոյ, որ հին թատերախաղուց երկարագոյն և ամենազժուարին գերերէն մին է, առոյդ է և պատրաստ ուրիշ գեր մ'ալ արտասանելու: Եւ աւելորդ է մասնանիշ ընել Մօլիկոփի կատակերգական մասերուն ձևացման ամենամեծ զժուարութիւնքը. որովհեան յայտնի է՝ որ եթէ աեսարանն ինքնին հանդիսականաց գուարթութիւնն և զարմացումը անընդհատ վառ պահելու ոյժ չունենայ, իսկոյն դուրս կը ցայտէ անձին և աեստրանին գոռեհիկ ոճը, չափաղանցութիւնն և անհեթեթութիւնը. և մեծ բանաստեղծին ունեցած յարզը չի զօրեր հանդիսականաց ձանձրոյթը և անհամբերութեան նշանները զսպելու. ինչպէս գաւառաց թատերաց մէջ կը պատահի, յորս Մօլիկոփի կատակերգութեանց ներկայացումը գրեթէ անկարելի է:

Այլ գորէն կարծես թէ Մօլիկոփի թարգման ըլլալու ծնած է. և փոխանակ գաղղիական կատակերգութեան թատրոնին բաժաննորդ ընկեր ըսելու, կրնանք Մօսիկօհիկատակերգուաց հըռչակաւոր ընկերութեան գերասանաց վերջամասաց մը համարիլ, որ կատակերգակաց անմահ զլսէն առած գասերն երկու գար յետոյ իրքն երէկուան գասանմուացարար ՚ի գործ կը դնէ: Գոքէնի երեսն մեծապէս յոյժ ձեռնտու

է այս յաջողութեան: Այս մեծ խեղկատակին զուարթայարժ նայուած. քին, ծիծաղին, և ծերծեքական հըտպիտութեանցը չէ կարող մարդ դիմանալ. հոգւոյ ինչ վիճակի մէջ որ ըլլայ, պէտք է որ անոր հետ ծիծաղի, և չէ սովորական ծիծաղ, այլ քրթական, բարձրաձայն և ամրող մարմինը շարժող ծիծաղ, որ թատրոնէն գուրս ել. լելէն ետքն ալ՝ կը նորոգի ՚ի մեզ մեղմագոյնս, նոյն ծիծաղով տուն կը հասնիք, երկրորդ առաւօտ ևս նոյն ծիծաղով կ'ենենք, և յաւերթական ախորժելի յիշատակ մը կը մնայ ՚ի մեզ:

Է

Արդարեւ իւր այս գերասանական փառքն աւելի իւր բնութեան ձիրքէն սուացաւ քան թէ ուսմանէ: Դիերասանուրիենն ՚ի ծնենդենէ է: Եթէ այս ճըշմարտութիւնն ընդունինք ևս ընդհանուր խօսելով, պէտք է զարտուղութիւն մի ընենք և ընդունիք անսոնց համար, որոնք ՚ի հասակի քսան և երեք ամաց մեծ գերասան կը հանդիսանան: Այսու հանդերձ՝ կարի յոյժ վաստակեցաւ և ուսաւ նա: թէպէտ երնելի ծիւրբէ գուսանին պէս՝ ձայն մը չնարեց, այլ անդուլ և կանոնաւոր կրթանօր անխոնչարար յոկեց զայն, և շատ տարի չէ որ յաջողեցաւ իւր ձայնական գործարանին զարմանալի առածքութիւն մը տալու, և իւր զգացմանց զանազանութեանն և բիւրակերպ ու երազաշրջեկ փոփոխութեանն՝ գիւրաւ ծառոյելու ճկունութիւնն Այսպէս իւր ամենազուտ արտաքերութիւնն, որ իւրագանչիւր վանկն բիւրեղանման յատակութեամբ կ'արտասաննէ, կամաց ուժգին ներգործութեամբն ստացաւ. ինչպէս Ալֆիէրի իւր ոտանաւորին կորովութիւն տալու համար՝ ոչդիման կամնացայ կ'ըսէ:

Մարգուս սրտին մէջ ուսման տենչն կը վառուի ՚ի լսեն ՚ի գորէնին թէ ինչպիսի եռանդգեամբ և ջանիք ձեռնարկ կեր է ուսանել Աննիբաղի մասնը, երբ Օժիէ կոկեց և յերիւրեց զբահտա-

իւնդիր կին (L'Aventurière) թատերախաղը. թէ ինչպէս պարբերութենէ 'ի պարբերութիւն և գարձուածէ 'ի գարձուած բոլորովին փախեր է իւր խաղարկութեան կերպը և նոր բացատրութիւն տուեր է, թէ ինչպէս մէն մի խօսքն ամէն կերպ գարձուցեր և արտասաներ է իւր յատուկ շշուն զըանելու աղագաւ. ինչպէս մէն մի շարժումն և ծիծաղ յառաջագոյն քններ և կարգաւորեր է :

Սոյնպէս կ'ափշի մարդ՝ ի լսելն 'ի նըմանէ. Պօմառչի Վարսավիրայն սիւիշացի խաղին Ֆիկառոյի մասին վրայ ըրած մանրամասն և հանճարեղ խորհրդածութիւնքը, զերիտասարդ և անխորհուրդ Ֆիկառոն զանազանելու համար. Ամսաննուրիշն Ֆիկառոյի կատակերգութեան ֆիկառոյէ, որ յառաջացեալ էր տիղը, որով և առաւել փորձառու, և ստացած նոր վիճակին աղդեցութեամբն ևս զգօնացեալ. — և այս խորին հրաշալի եղանակաւ կերպարանց թատերաբեմին վրայ, նաև ամենափափուկ և անզգալի տարբերութիւնքը. թատերախախաղուց հեղինակաց հետ ալ ժամերով կը խօսակցի, ձեռագիրն 'ի ձեռին, զոր կոչմամբք և ծանօթութեամբք ծեփած է, 'ի միասին խորհելու և գտնելու համար տեսարանի մը տալու յատուկ գոյնն կամ թէ ըսել բացատրութիւնը, և կամ մենախօսութեան մը ծայնական յարմար աստիճանը: Օժիէի և Ֆիւմայի հետ անվիրչանալի հականառութիւններ ըրած է՝ իւր ըմբռնած կերպը պաշտպանելու վախճանաւ, և ջանալով ընդունել տալ վերցիշելոց՝ իւր տեղզած անձն, զոր կը սիրէ իրբէ իւր հարազատ որդին:

Գրքերու մէջէն և խօսակցութիւններէ՝ հնախօսի համբերութեամբ և խնամքը՝ մանրամասն ծանօթութիւններ կը հաւաքի ձեսացնելիք անձանց գարուն և այն ժամանակին ընկերութեան կամ թէ ըսել՝ ընկերական վիճակին վրայ. և այնպիսի փութաջանութեամբ ամենայն ինչ կը նշանակէ և ամիսներու կը բաժնէ, և առանձինն մէն մի չնչին մա-

սանց վրայ իսկ այնչափ երկարագոյնս կը մոտածէ և կը տրամաբանէ, որ զրեթէ իմաստակութեան սահմանը քիչ մը կը մօտենայ: Եւ յայն տեսարանն՝ յորս առաւել իւր բնիկ բերման ձեռոքը պիտի յանձնէս սանձը, անդ առաւել մեծագոյն քննութեամբ և մեծագոյն հանդարութեամբ, յառաջագոյն կը պատրաստուի, որովհետեւ կ'ուղէ ապահով յանդգնութեամբ գործել. վասն այսոր նման բնապատում մատենազրի մը՝ ամենուստ զննողութիւններ և խորհուրդներ կը հաւաքէ. և ամօք առաջ իւր վրայ զրուած քննագատութիւնքն աշքէ կ'անցընէ: Սակայն որչափ և վատակի, լիսուի գոհութեամբ պատի չի ներկայանար առաջի հանդիսականաց, և նոյն իսկ յոյժ բարեյացող ելից յետոյ թերութիւններ կը նշմարէ իւր ձեւացման այս կամ այն մասին վրայ:

Ը

Դերասանութեան մէջ Գօրլէնի օրըստ օրէ անընդհատ յառաջելուն գըլլիսաւոր օգնողն եղաւ այս անխօնն ջանքը: Մի միայն մրցակից և ընթացակից ունի, որ է կօ, քսան ամօք քան զնատարեց, Գօրլէնի գաղղիսական թատրոնն մտած ատենը՝ արդէն հին դերասան էր՝ այն ականտուորն կօ, որ Լիրը (Les Effrontés) և Որդի Ժիպուայէի (Le fils de Giboyer) խաղից մէջ զգիհպուայէ ստեղնեց (բառ թատրոնական բացատրութեան), նա որ Ալֆրետ Միւսէի Զէ պարտ վատանորթեամբ առել ինչ (Il ne faut jurer de rien) խաղին մէջ անմտանալի իմն եղանակաւ կերպարանց զրահանայն. նա որ անհասանիլ է լեւոն Լոյայի Մէջըր կէռէն, Մօնիկ Բուրապիէ և Գուրքոն ժուպ գերերուն մէջ. նա որ թերենս առաջին դերասանն եղած է՝ որ գաղղիսական կատակերգործեան թատեր տեսարանին վրայ զգափի աստիճանի բնականութիւն զգեցաւ, և արուեստին աւանդութիւնքն յարգելով հանդերձ՝ ներկայացուցած անձինքն աշխարհիս մէջ տեսած ան-

ձանց վրայ կազմապարեց : Կօ ևս հաւա-
սարապէս ճարտար է՝ թէ սրտաշարժ և
թէ կատակերգակ մասերու մէջ : Գուռ-
շապոյի մէջ իրը և բեռնարդս կը հե-
ծեցընէ և կը լացընէ . Երինաղայարժ
մուապատրաւը (Illusion comique)
թատերախաղին մէջ իրը Մատանու՝
ծիծաղէ կը ճամփեցընէ զմարդ : Յետ
միանդամ տեսնելու զինքը Բարեկամ
Ֆրից (Amé Fritz) խաղին մէջ իրը ալ-
սացիայի Հրեայ բարունի, որ իւր յաղ-
թութեանց չքեղագունից մին եղած է,
կարելի չէ ճանչնալ՝ թէնդին անձն է՝ երբ
կը ներկայացընէ զջկանառէլ և կամ
Ռապինի՝ Դասաւաէրք կատակերգու-
թեան Շուրթիկու անձը, յորում անհա-
սանելի է : Մանր խոռվարկու, նոյն իսկ
ամենաչնին իրաց մէջ ևս իրականու-
թեան հետեղ . ամենաճարտար զիմաց
բացատրութիւնը շրջելու, ձեռնհաս՝
ամբողջ չորս հանդէս շարունակ ար-
տասանելու՝ միով ակամք թերափակ և
ծոռ քերնով և առանց յոգնութեան,
ինչպէս ըրաւ Օժիէի Փեսայ Պ. Բուշ-
սիէի (Le Gendre de M. Poirier) խա-
ղին մէջ . զրաւորական ընտիր ճաշա-
կաւ օծտեալ և մեծաւ հմտութեամբ
ճոխացեալ, և գուսանութեան սիրով
բորբոքած և հպարտացած : Այդ այս
անձն երկար ժամանակ գաղյիական
բատեր մէջ իրաւամբք առաջնութիւնը
պահեց . և բնաւ չիք տարակոյս թէ
գէթ իւր օրինակաւն մեծապէս օգտա-
մատոյց եղաւ գոգիէնի :

Իսկ սա, 'ի բաց թողլով անոր զուտ
անձնական յատկութիւնն՝ որը ան-
զուգական են, սա գերազանց է քան
զիօ հանճարոյն դիւրաթիւնութեամբն
և զիմաց դիւրափոխութեամբն . կօ
բազմափոխին է . այլ Գորչէն՝ Պրոտէռու՝
է : Օրինակ իմն, իօ՝ շարժուածքի և ձայ-
նի եւեէից մէջ իւրական և անփոփո-
խելի կնիք մ'ունի, ինչպէս նաև ըստ
գաղղիական բացատրութեան՝ տեսակ

մը դժուարաբարոյութիւն, որով ան-
կերծ հումարձակուրեան երեսոյ կ'ու-
զէ առնուլ . բաց աստի, ուսոց և զլիոյ՝
տեսակ մը ակամայ ընդուատումն մ'ու-
նի, իբրև թէ ուզենար ըսել թէ պինաւ
հոգ շեմ ըներ » . և այս կէս հասարակ
ձեւն՝ անբաւական կ'ընէ զինքն առ այն
ամենային մասունս, առ որս չնորհաշուկ
և իշխանական շըեղութիւն կը պահան-
ջուին : Յաւել և զայս, զի լաւ յաջող-
ցուցած գերի մը շարժմունքներն և շեշ-
տերը կը պահէ և կը գործածէ երկար
ժամանակ, մինչ զի մեծ և հրապորդիչ
ինքնաստեղնուրենէ մը ետքը, յայլ
թատերախալդայ այդ իւր նախասիրեկի
անձին պատկերը կը տպաւորէ իւր
շարժուածոց և խօսից վրայ . ինչպէս՝ 'ի
բաց թողլով ուրիշ օրինակները, տես-
նուեցաւ զիփիպուայէ . յաջողցընելէն
յետոյ :

Ընդհակառակն'նոյն բանը շի պատա-
հիր Գորչէնի, որոյ տաղանդն թուու իմն
թէ մէն մի նուռագ դեր փոխելուն՝ բնու-
թիւնն ևս կը փոփոխէ, և որ մինչև
ցհասարակ զաւեշտ կ'իջնէ, ապա կը
վերելակէ մինչև 'ի բարձրագոյն բա-
նաստեղծութիւն . որ հաւասարապէս
կը ձեանայ հտպիտ, ազնուական, զիւ-
զացի, հանճարախօս, բռնաւոր, —
դիւցազն խառվութեան և ողբերգակ՝
Յովլաննէն Տասիէի մէջ . — Աղիւճն
և Աղուէսու մէջ ախտամնլ և խաբերայ
գպրոցական աշակերտ . և միշտ նոր-
օրինակ երեխլով, յոտից մինչև ցզուուի
ամեն անգամ՝ նոր ձուլուելով, և բնաւ
յիշեցընելչի տար հանդիսականաց՝ իւր
նախընթաց դերերը . Եթէ յանկարծ
եռանզը վասուի օր մը և ուզենայ իւր
այն զիմաքն՝ Եկեմսբիրի Ռումենս և Յուր-
յիէդյա ողբերգութեան՝ Ռումենսի գերը-
ներկայացընել, կընամ հաստատապէս
ըսել որ պիտի յաջողի, ինչպէս գերմա-
նացի քննարքան մը ըստ, և իրեն լուղ-
քը պիտի ըսեն թէ Յուլիէդդայի գեղեց-

նուաց, վասն որս և միակերպ կերպարանա-
փոխ կը լինէր՝ խոդրողներէն չճանցուելու-
դիւնամք :

կագոյն սիրահար մը կրնար վիճակիլ, այլ ոչ առաւել յանկուցիշ և առաւել կաթոգին :

Ի վերայ այսր ամենայնի՛ կան նաեւ բազումք՝ որ զիօ կը վերադասեն քան զգագլէն, իբր առաւել ծանրաբարոյ և արուեստին առաւել ևս խորամուխ։ Ասոնց երկուքին մէջ թաքուն՝ այլ վառ նախանձաւորութիւն մը կ'եռայ, որ 'ի վեր կ'ելլէ այն ամէն անգամուն՝ որ երկուքն միանգամայն մի և նոյն դերը ընտրել կ'ուզեն. ինչպէս այժմ վիկտոր Հիւկոյի Զրուանք արքայի (Լթ Ռօ Տ'ամսօ) թատերախաղին մէջ երկուքն ևս կ'ուզեն Դոփառուէի գերը ձեւացընել. և այս իրարմէ խելլու յօժարութիւնն պատճառ է՝ որ թատերախաղին հանդիսացումը կը յերկարածգի, երկուքին ևս անընդունելի ըլլալով միայն գամայն առաջարկութիւնն թէ օր ընդ մէջ փոխադարձաբար ձեւացընեն այդ անձկացեալ Դոփառուէի մասը. — իսրագէտ գրամադիտի առաջարկ, այլ ոչ մարդկային սրտի փորձառու անձի:

Շ

Գօքլէն իւրուրոյն առաւելութիւն մի ալ ունի, որ է՝ քնարերգակ բանաւստեղծութիւնքն գերազանցօրէն ձեախօսելու ձիքը: Նախ և առաջ ոտանաւորի արտասանութեան մէջ անդուգական է, որ արուեստին մէջ գրեթէ ուրիշ արուեստ մի է. և այս կողմանէ՝ կօ և Սառա Պէռնառատ միայն կը մերձենան իրեն: Այն սակաւագիւտ գերասանաց մին է, որ կարողացած են չափով մը թօմափել այն սովորական ելեւչքն և այն ընդհանուր միաձայնութիւնն, որ զրեթէ պարտաւորեալ եղանակ մի է գաղղիական գիւցազներգակ տաղաչափութիւնն արտասանելու, և զոր նոյն իսկ ջերմանջերմ կրից զեղման միջոց, ամէնքն անայլայլակ պահել կը ջանան՝ իբրև արուեստին հիմնական պահանջից մին:

Գօքլէն հեռացաւ այս միօրինակութենէն, և այս տեսակ մի սրբազն եր-

Պրաւ Ա.

գարանութենէ, (ինչպէս որ սահմանեց զայն Սդաէլ տիկինն), որ ժառանգական ախտի նման ազգէ յազգ կը փոխանցի. և միջին ճամբայ մը բանեց ընդ նոսա՝ որք կ'երգեն ոտանսաւորը քնարեր ներգանչակութեամբ մը, պարուրելով տողերն և ամենայն անհաւասարութիւնքն վերցընելով եւ միահարթ գործելով, և ընդ նոսա՝ որք իրականին նմանելու պատճառանքը՝ ոչ անդամոց ուշ կը գնեն, ոչ յանդի, և ոչ վանկից սղութեան կամ երկարութեան, և բանաստեղծութիւնը թատերական արուեստին բոլորովին կը զոհեն: Այնպիսի ասացուածք մը գտաւ, որ թէ խօսքի և թէ երգի յարակից է, որ մի և նոյն ժամանակ ականջի քաղցրարուր կը հնչէ և խօսակցութեան գաղափար կու տայ:

Յոյժ ճարտար է տաղաչափութեան գեղցկութիւնն դուրս ցատկեցընելու մէջ: Առանց արուեստակութիւն արտայայտելու՝ կը զգացընէ դարձուածոց և յանգից ամէն փոփոխութիւնքը, հանգիստներու ծածանմունքը և տարբերութեանց կապակցութիւնքը, ամենափափուկ լուսաստուերօք աղեքքսան գրեան տողից միակերպութիւնը կը կոարէ, մեծաւ աղդուռութեամբ ստորակէտերն և կէտերը կը չեցոէ, և բազաձայնքն ամուր և որոշ հնչելով՝ այնպիսի զիւրիմաց և ամենայստակ առողջանութեան համար անտօրիննելի հարկաւոր ձիքը, — որ ոչ ոք 'ի գերասանաց կրցաւ գերազանցել:

Ասկէ զատ ոչ միայն քերթողին թարգման է նա, այլ և քննարան և ճշմարիտ սրբագրիչ: Ոչ ոք քան զի՞նքն աւելի հասու է բանաստեղծութեան մը հիմնական իմաստին, որով քերթողական աւարադէպ զարտուղութեանց մէջ ալ չիկորսնցըներ զայն բնաւ, և այնպէս կ'ընէ՝ որ ունկնդրաց ուշագրութիւնն չիեւանայ անտի և ոչ փոքր իսկ եղանակաւ:

Ճատ ճարտար է ոտանաւորին մէջ սպրդած քերթողական թերութիւնքն

Ց

ծամկելու, երկարաբանութիւնքն սահեցընելու, տկարագոյն մասունքն ըստուերարկելու և զեղցիագոյնքը լուսաւորագոյնս արտափայլել տալու, գըշխաւոր տողը դուրս ցառքեցընելու. և նկարագրութեանց մէջ ծածկուած իմաստներն, մտաց անտես ցոքն, հեղձուցեալ նրութիւններն, և հակագրութիւնքը, որոց կարեռութիւնը նոյն իսկ հեղինակը չէր հասկցցած, յերևան հանելու և պայծառացընելու:

Այլք ճարտարութիւնն 'ի գործ կը դնէ ազնուականաց և փարթամաց ակըմից մէջ, — յորս փոխարինութեամբ կը կանչուի — ուր այսպիսի արուեստ մը 'ի գործ գնեն առաւել յոյժ գժուարին է և տարբեր՝ քան 'ի թատերս, այնպէս որ բազում զերասանիք՝ որը թատեր վրայ մեծամեծ ծափահարութեանց կ'արժանաւորին, երբ ունկնդրաց փոքր շրջանակի մը մէջ ոտանաւորներ կ'արտասանեն՝ կը ջլատին և ազդուութիւնը կը կորսնցընեն: Բնդ հակառակն դպրէն ուկնդրաց մերձաւորութենէ պատճառեալ և պահանջեալ փափուկ և գժուարին կանոնները գիտնալով՝ ճըշդագոյնս կը պահէ. և որովհետեւ շատ անդամ դերասանն կամ արտասանողն այնչափ մօտ կ'ըլլայ իր ունկնդրաց, որ զրեթէ անոնց հետ խառնուած է, այն պատճառաւ գորլէն մոտաց վրայ ընկիք տապաւորութիւնները կը փոքրկացընէ, ձևերը կը զսպէ, զիմաց բացատրութիւնը կը մեղմէ, մասնաւոր իմն եղանակաւ ձայնը դաշնակօրէն կը չափաւորէ, և աներեւութացըներով կատակերգակ դերասանն՝ իրեր բարձր ընկերութեան մարդ կը հանգիստաց, վասն որոյ թատերական չքեղ յալթութիւններէն ոչինչ նուազ՝ առանձնականաց տուները նշանաւոր յալթանակներ կը տանի, որով և մեծապէս օդտամատոյց կ'ըլլայ գրագիտաց երկասիրութեանցը:

Այս յետին տարիներուս մէջ ինքնեղաւ որ ոտանաւորաց ճաշակը տարածեց ազնուականաց նազենի գասուն մէջ, որ յառաջագոյն երաժշտութեանցն միայն միրողք էին, և Գաղղիոյն նորա-

ծնունդ երևելագոյն բանաստեղծներէն բազմաց համբաւոյն սկզբնաւորութիւն ինքն գորլէն տուաւ: Որովհետեւ ինքն եղաւ առաջին անգամ՝ որ արտասաննեց Ալիբոնս ծօտէի, իւր մոներիմ բարեկամին, բանաստեղծութիւնքը. ինչպէս նաև Պօղոս Ցէռուլէտի տաղերն, որոյ տաղանդին վրայ կը հրանայ, և Յակոբ Նոռմանի, Գորէի, Մանուելի և Կիւառի քերթութիւնքը: Եւ անբացատրելի է թէ ինչ եռանդով կը փնտուէ այս բանաստեղծութիւնքը, ինչպիսի հանոյիք ընթեռնուլ կու տայ զանոնք 'ի տան, 'ի փողոց, 'ի կառս և 'ի սենեակս Պռէպան ճաշատան: Ինչպէս ազդու տողերուն կը զգածուի. ինչպէս մնիկ ըրած ատենը, առանց իւր անդրադառնալուն՝ երեսին շարժուածքը և ձևը կը պատրաստէ, որով որ յետոյ տաղին այն տունը պիտի արտասանէ. ինչպիսի անհամբերութեամբ վերջին տողին՝ զձեռագիրը բանաստեղծին ձեռքէն կը յափշտակէ, և թէ ինչպէս մեծ արհետաւորի մը սեփական գեղեցիկ և համակրական վստահութեամբն կ'ըսէ ծիծագելով առ հեղինակն: — Հոգ մի ըներ պատւական, ինձէ թող յաջողցընելն:

Ժ

Այլ Գորլէնի նկարագիրն 'ի գլուխ հանեալշեմ համարիր՝ առանց եղրօնութուագիծը վեր 'ի վերոյ յարելու, որ իրեն իրը յաւելուածն է: Նա ևս Գաղղիական թատուեր դերասան է, և կըրտսերն Գորլէն կը կոչուի՝ կոստանդէ զանագանելու համար:

Կրտսերն Գորլէն հօրը փուան հրոյն դիմաց սնաւ և աճեցաւ երիցացցոյն եղրօն հետ, և անոր հետ թարմ հացն ալիւրոտ զիմնք և խմբրազանդ ձեռք տարաւ ծովանիստ Պուլները քաղաքին բարի քաղաքացւոց: Երբ ելիէց եղրայրն կատակերգական բերման առաջին նըշանքը կ'արտայայտէր, ինքն տիգը տակաւին մանուկ՝ կը ջանար նմանիլ անոր, ձևեր ընելով և տաղեր թոթուի.

լով. և յետոյ երբ եղբայրն իւր փառա-
սիրական զիտաւորութիւնը նմա հա-
ղորդեց, ինքն ևս սկսաւ այնու վառուիլ
և 'ի թատր մտաքերել:

Մեկնեցաւ երէց եղբայրը. քանի մը
տարի անցաւ վրան, հուսկ ուրեմն
կրտսերն գօրէն խորհեցաւ իւր միտքն
հօրն յայտնել, այլ չեր համարձակեր,
որովհետեւ հայրը միտքը դրած էր իւր
փուռը նմա յանձնելու, առ յապայս
յաջրդութիւնը պահել տալու համար։
Սակայն և այնպէս օր մը սիրու ըրաւ և
խօսքը անկեց. Անդրանիկին հանդիպած
տեսարանը՝ կրտսերոյն ալ հանդիպե-
ցաւ. այլ այս անգամ աւելի բորբ-
քեալ. երբ ազնիւ հացագործն այս եր-
կրորդ անգամ լսեց այն ձախորդ խօս-
քը թէ — կ'ուզեմ կատակերգակ դե-
րասան ըլլալ. — զլուխը տաշտէն վեր
վերցնելով վահանանման խոշոր ա-
չքն որդուոյն նայեցաւ, — « Ուրեմն,
ըստ ձեռք ձեռքի կցելով կը ծոց վրայ,
իմ յատուկ ճակատագիրս է որ որ-
դոցս և ոչ մին կարենամ քովլ պահել
կարծես ամէնքն տեսակ մը ժանտախ-
տէ բռնուած են. խելքս չի հասնիր. Ռ'վ
Տէր, ուսկից առին այս հիւանդութիւ-
նը. — Ա.Ա. յետ սակաւ ընդդիմու-
թեան՝ խնարհեցաւ և թողուց որ տը-
զան 'ի Բարիկ երթայ. ուր հասնելէն
սակաւ ինչ յետոյ՝ Երաժշտութեան
դպրոցն ընդունուեցաւ. Մեծ տաղանդ
և յարմարութիւն ունէր սոյն արուես-
տին, այլ ոչ նաև եղբօրն առոյց կեն-
դանութիւնը և անոր կարողութեան
ընդարձակութիւնն և փայլը. Վասն ո-
րոյ իւր աշակերտութեան ընթացքը տա-
ժանելի և երկարագոյն եղաւ. Ա.Ա. 'ի
վերայ այսր ամենայնի՝ յաջողեցաւ. և
1867ին նոյն դպրոցին առաջին մրցա-
նակն իսկ ընդունեցաւ, և 1869 տա-
րուոյն յունիս 10ին՝ Գաղղիական կա-
տակերգութեան թատեր վրայ առաջին
անգամ ելաւ Դատասէրը կատակեր-
գութեան Բրդի-Ժան գերը ներկայա-
ցընելով, եղբօրն սկսելէն ութը տարի
յետոյ, որ և սիրալիք զգացմամբ ուզեց
անոր հետ ձևացընել այն երեկոյ նոյն

կատակերգութեան ինտիմէ գերը։
կրտսերն գօրէն հանցացաւ հան-
դիսականաց. Դիմօք յոյժ նման է երէց
եղբօրը. թերեւս առաւել ծաղրակերպ
է կերպարանքը, այլ անոր պէս նշա-
նաւոր գծեր չունի. տեսարանին վրայ
երեցածին պէս՝ ամենուն ծիծաղը կը
շարժէ. Ա.Ա. իւր կատակերգակ տա-
ղանդին յատկութիւնը տարբեր է. սա
աւելի անգղիական ծաղրածութեան
կերպ մը ունի, մտացածին, նոր օրի-
նակ, սակաւիկ մի ցրտին. զուարձա-
բանութիւն մը՝ որ արտաքին մեծ ցոյց
մը չունի և զոր կը գուշակեն ունկըն-
դիրք ինքնօրինակ և նուրբ գերասան
է, և որ աւելի զարմանալին է՝ իւր եղ-
բօրը բնաւ և ոչ իսկ հեռուէն նմանու-
թիւն ունի. զոր և փորձով ցըցուց, իւր
գերասանութեան սկիզբները, Յուլիոս
Բաէվկիլ Արաւուր ամուսնուց (Le ma-
tri qui pleure) կատակերգութեան մէջ
Լաւոշ փաստաբանին մասը ձևացընե-
լով, զոր երեցն գօրէն փառաւորապէս
խաղացեր էր, և կրտսերն ըստ ամե-
նայնի տարբեր եղանակաւ ներկայա-
ցուց, յոյժ տաղանդաւոր կերպով, և
բազում ծափահարութեանց արժանա-
ցաւ ունկնդրաց։

Ա.Ա. երէցն այնքան 'ի վեր է քան
կիրտսերն, որ և ոչ իսկ բաղդատու-
թիւն կարելի է ընել մէջներին. սակայն
հանդերձ այնու նախանձն ոչ երբեք
պղոտորեց երկուքին եղբայրական խան-
դակամթ մէրը. Անդրանիկին առաւել
քան իրըն եղբայր՝ հօր պէս կը սիրէ
զիրոսները. և իւր գրասենեկին մէջ
երբեմն երբեմն անոր պղնձեայ փոքր
կիսանդրուոյն կզակը շյուլով ձեռքքն,
ծաղրածութեամբ « Ահաւասիկ կրտսեր
եղբայրս » ըսած ժամանակին, սրտին
յորդ զգացումնը ձայնին մէջ տպաւո-
րուած կը տեսնուի, և աշացը մէջ հա-
զարումէկ թանկագին յիշատակներ կը
նկատուին. — այսինքն թէ ինչպէս ա-
տենօք փողոցաց մէջ 'ի միասին կը վաղ-
վրզէին՝ սապատով ներմ չօթեր (տճ.
չօրէք) տանելով, և թէ Կոյս մը գրա-
մոց կը տանէին կու տային՝ տաշտին

վրայ ծռած բարի հօրերնուն, որ և ոչ
իսկ մտքէն կ'անցընէր թէ օր մը իւր
երկու զաւակներն աշխարհիս առաջին
թատրը ծափահարութեամբք պիտի զը-
դրդեցընէին, և թէ իւր խեղճ փուռը
օր մը պիտի համբաւուէր:

ԺԱ

Այժմ երէցն գօրլէնի դերասանու-
թեան կորովադոյն ժամանակն է, և
թերես իւր կենաց ընթացից երջանկա-
զոյն մասնը կը վարէ: Գաղղիական թա-
տեր աջքի լոյսն է, ազգեցութիւն ու-
նեցող արանց մտերիմ բարեկամ, 'ի
բանտառեղջից գգուեալ, յօդնութիւն
և 'ի խորհուրդ կոչեցեալ ամէն երիտա-
սարդ կատակերդակ հեղինակներէ. գո-
վասանեալ իրեւ գերասան, մեծարոյ
իրեւ գրազիտաց մեկենաս, հարստու-
թեամբ փարթամացած. բաց 'ի ընտիր
կատակերգութեանց՝ փափազելու ու-
րիշ բան չո՞նի:

Բայց ինքզինքը միայն չի մտածեր: Ա-
մէն կողմէն բարեգործութեան համար
արուելիք ներկայացմանց հրաւիրուե-
լով՝ ամենուն աղաշանքն կ'ընդունի,
բնաւ չինայելով իւր առողջութեանը,
և բազմաթիւ անձանց բարիք կ'ընէ, ո-
րոց 'ի փոխարէն և 'ի չնորհակալութիւն
արուած և հետզիետէ արուսդ միտա-
լը և թանկագին յիշատակօք հոծ մեծ
անեակ մը ունի. և հարկ չկայ ըսել՝ որ
այս երախտագէտքն են գործաւորաց
ընկերութիւնք, ամէն տեսակ բարեգոր-
ծական հաստատութիւնք և վարժոցք:

Գեղարուեստից ևս սիրող է. և փո-
քրիկ թանգարան մը ունի Մէյսոնիէի,
զօնայի, Ֆուղիւնիի և Տեղայլի պատ-
կերաց, յորոց ոմանց մէջ ինքն գօրլէն
նկարեալ է. Մասգառիլի և Տը Պաղան
կեսարի զգեստուք, այն անբայսատրելի
և յաղթահարիչ ծիծաղով, որ իւր դե-
րասանական կարողութեան զլսաւորա-

գոյն և էական մասանց մին կը կազմէ:
Առանց թատրն իսկ երթալու, կարե-
լի է իւր այս կարողութեան վրայ ճըշ-
գրիս գաղցափար մ'առնուլ, եթէ մէկն
ամէն առաւօտ անոր նախասենեկին
մէջ ժամ մի միայն կենայ, ուր յաճախ
'ի միասին կը գտնուին սովլալրուկ կա-
տակերգակ դերասան մը՝ օգնութիւն
խնդրելու եկած, (զոր բնաւ չի զլանար
Գօրլէն), ամերիկայի տիկին մը որ գաղ-
դիերէն առողանութեան գասի եկած
է, ասպետութեան նշանին փափագող
տէրութեան ասորին պաշտօն աւորն, տե-
ղափոխութեան պէտք ունեցող սպայն,
և երբեմն մինչև անգամ գաւառապեսք
և ատենակալք, որ ամօթ չեն համարիր
իրենց՝ աղաշիլու Զկանառակի դերը
ձեացընողն, որ իրենց համար տէրու-
թենէն փոքր չնորհք մի ընդունի իսկ
նա զամենեսին կ'ընդունի իւր ՚ի վեր
ոլորեալ մեծ քթովն, և զեղոնն բարե-
սիրութեամբ և զուարթ լեզուաւ, եր-
կար իսօսակցութեանց ժամանակ Մօ-
լիէսի տողեր որոճալով մտացը մէջ. և
ամէնքն իւր տնէն գուրս ելած ատեն-
նին, եթէ հաւասարապէս կատարուած
չէ բազմանքին, գոնէ գոհ սրտով կը
մեկնին միանգամ տեսնելնուն համար
այն ահարկու դիմակն, որ քսան տա-
րիէ 'ի վեր՝ ծիծաղած ատենը կը ծիծա-
ղեցընէ և արտասուած ատենը կ'արտա-
սուեցընէ զհարիզ:

ԺԲ

Այսպիսի և կամքիչ շատ այսգունակ
է ականաւորն Գօրլէն, որ (որպէս զի
բարի լրով մը վերջացընեմ) կը խորհի
արդ քաջ գերասանից ընկերութիւն մը
կազմել, իտալիոյ մէջ շրջան մ'ընելու
և երեւելի քաղաքաց մէջ բազմաթիւ
թատերախաղեր ներկայացընելու դիտ-
մամբ:

ԹԱՐԵՆ. Հ. ԵՓՐԵՄ ՌԱՋԻՆԵԼԻԱՆ